ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն/7-Ա
« 24 » ՀՈՒՆՎԱՐԻ 2025Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՏԻՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՍԵՑՄԱՆ ԵՎ ԻՐԵՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 28-ի թիվ 283-Ա որոշմամբ հաստատված «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 60-րդ կետը և ՀՀ հակակոռուպցիոն դատարանի 2025 թվականի հունվարի 18-ի ՀԿԴ/003/06/25 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Կասեցնել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Վահե Ղազարյանի լիազորությունները մինչև 2025 թվականի մարտի 17-ը ներառյալ:
2. Վահե Ղազարյանի բացակայության ժամանակահատվածում համակարգողի գործառույթների իրականացնումը վերապահել տվյալ հաստատության տնօրեն Գոհար Բաբայանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2025-01-24 17:27:13 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր